# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2026 թվականի N 327 - Ա

## ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 22-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի և 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) ամրացված (բացառությամբ սույն որոշմամբ հաստատված հավելվածի ցանկի Երևան, Արաբկիր, Կոմիտասի պողոտա 49/3 հասցեում գտնվող N 17 լոտի, որի 15 102.5 քառ. մետր մակերեսով շենքից 13 592.8 քառ. մետրն ամրացված է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը, իսկ 1 509.7 քառ. մետրը՝ կոմիտեին), պետական սեփականություն հանդիսացող գույքը (այսուհետ՝ գույք) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 587-Ն և 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1667-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջների համաձայն՝ օտարել էլեկտրոնային աճուրդով՝ համաձայն հավելվածի, որպես գույքի առանձին տարրեր:

2. Սահմանել՝

1) գույքի օտարման պայմանները՝ համաձայն հավելվածի.

2) որ գնորդը պարտավոր է վճարել նաև գույքի արժեքի որոշման ծառայությունների վճարը (ներառյալ ավելացված արժեքի հարկը), որը ենթակա է վճարման աճուրդի արդյունքների մասին արձանագրությունն ստորագրելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում և չի համարվում գույքի վաճառքի գնի մաս.

3) որ առաջին աճուրդը չկայացած համարվելու դեպքում՝ կազմակերպել հերթական աճուրդներ մինչև գույքի հերթական աճուրդների կազմակերպման վերջնաժամկետը՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 5-ի «Պետական գույքն օտարելու մասին» N 1927-Ա որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Պետական գույքն օտարելու մասին» N 2065-Ա որոշումը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի «Պետական գույքն օտարելու մասին» N 153-Ա որոշումը.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 20-ի «Պետական գույքն օտարելու մասին» N 164-Ա որոշումը.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 6-ի «Պետական գույքն օտարելու մասին» N 232-Ա որոշումը.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 15-ի «Պետական գույքն օտարելու մասին» N 571-Ա որոշումը.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 29-ի «Պետական գույքն օտարելու մասին» N 672-Ա որոշումը.

8) Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունիսի 26-ի «Պետական գույքն օտարելու մասին» N 841-Ա որոշումը.

9) Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի օգոստոսի 28-ի «Պետական գույքն օտարելու մասին» N 1220-Ա որոշումը.

10) Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հոկտեմբերի 9-ի «Պետական գույքն օտարելու մասին» N 1437-Ա որոշումը.

11) Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հոկտեմբերի 30-ի «Պետական գույքն օտարելու մասին» N 1517-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
մարտի 19-ի N 327 - Ա որոշման

# Ց Ա Ն Կ

| NN ը/կ | Գույքի գտնվելու վայրը, անվանումը և գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարը | Շենք-շինությունների մակերեսը (քառ. մետր) | Գույքի զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար հատկացված հողամասի մակերեսը (հեկտար) | Գույքի գնահատ-ված շուկայական արժեք (դրամ) | Գույքի գնահատված շուկայական արժեքում ներառված հատկացված հողամասի գնահատված շուկայական արժեքը (դրամ) | Գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (դրամ) | Հատկացված հողամասի տվյալ պահին գործող շուկայական արժեքին մոտարկված կադաստրա-յին արժեքը (դրամ) | Գույքի արժեքի որոշման հետ կապված գումարը (դրամ) | Գույքի գնահատ-ման ամսաթիվը | Գույքի հերթական աճուրդների կազմակերպ-ման վերջնաժամ-կետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մարզ Շիրակ, համայնք Անի Մարալիկ ք. Հ. Շահինյան փողոց 3 բանկ (վկայական N 03112023-08-0042) | 871,99 | 0.134 | 68 400 000 | 6 100 000 | 34 362 697 | 1 061 280 | 398 036.40 | 18.08.2025 | 17.08.2027 |
| 2 | Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Վ. Սարգսյան փողոց 25/9 հիվանդանոց (վկայական N 24012023-08-0047) | 1968,67 | 0.4527 | 324 400 000 | 144 400 000 | 174 843 838.6 | 20 108 028 | 733 966.8 | 04.09.2025 | 03.09.2027 |
| 3 | Մարզ Արարատ, համայնք Արտաշատ գյուղ Մխչյան Մ. Մաշտոցի փողոց 28 անասնաշենք (վկայական N 10022025-03-0014) | 1198.59 (տարածքում առկա է ինքնակամ կառուցված 99 քառ. մետր շինություն, որը ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ | 2.45043 | 105 600 000 | 78 300 000 | 104 564 102.25 | 70 756 166 | 608 687.80 | 20.03.2025 | 19.03.2027 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված ժամկետների ավարտից հետո) | | | | | | | | |
| 4 | Մարզ Լոռի, համայնք Ալավերդի գյուղ Ձոճկան 1 ուղեկալի (վկայական N 30072024-06-0028) | 1109.5 | 4,0 | 68 933 000 | 13 464 000 | 42 210 019 | 13 464 000 | 776 280 | 12.11.2024 | 11.11.2026 |
| 5 | Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան ք. Ռուսական փողոց թիվ 9 (վկայական N 30042019-05-0039) | 2572.67 | 0.679 | 190 500 000 | 73 300 000 | 185 541 190 | 19 606 125 | 908 920.80 | 20.12.2024 | 19.12.2026 |
| 6 | Երևան, Ավան Աճառյան փողոց 39/6 (վկայական N 10052024-01-0066) | 80,98 (տարածքում առկա են 74,0 քառ. մետր արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված շինություններ) | 1.601295 | 2 229 400 000 | 2 224 500 000 | 403 783 093.37 | 398 539 907.37 | 258 077.70 | 28.10.2024 | 27.10.2026 |
| 7 | Մարզ Լոռի, համայնք Վանաձոր ք. Նիզամու փողոց 53/1 հիվանդանոց (վկայական N 13082021-06-0052) | 3347.26 | 0.32094 | 276 800 000 | 65 400 000 | 230 886 170.92 | 14 255 513 | 1 041 111,60 | 20.12.2024 | 19.12.2026 |
| 8 | Երևան, Արաբկիր Ն. Զարյան փողոց 22 շենք, 11 տարածք (վկայական N 17042024-01-0040) | 537.3 | 0.300644 հա մակերեսով հողամասի (որից՝ 0.01251 հա մակերեսով հատվածը ծանրաբեռնված է սերվիտուտով) և շենքի ընդհանուր բաժնային սեփականության գույքի 537/4683 բաժնեմաս | 238 900 000 | - | 124,624,884.13 | 31 239 437 | 271 428 | 02.07.2024 | 01.07.2026 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Բաղրամյան փողոց 147 (վկայական N 22102025-06-0077) | 1071.2 | 1.546 | 80 300 000 | 67 100 000 | 54 591 755 | 29 029 242 | 619 848 | 14.07.2025 | 13.07.2027 |
| 10 | Մարզ Կոտայք, համայնք Հրազդան Հրազդան ք. Հարավային թաղամասի Ս. Սպանդարյան փողոց 47/3 (վկայական՝ N 22052023-07-0203) | 167.17 | 0.22364 հա հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ 167/1180 բաժնեմաս | 30 800 000 | 6 600 000 | 15 226 078.70 | 1 405 900 | 122 241.60 | 12.11.2025 | 11.11.2027 |
| | Մարզ Կոտայք, համայնք Հրազդան Հրազդան ք. Հարավային թաղամասի Ս. Սպանդարյան փողոց 47/4 (վկայական՝ N 24032023-07-0134) | 136.38 | 0.22364 հա հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ 136/1180 բաժնեմաս | 24 100 000 | 5 400 000 | 13 094 934.86 | 1 144 890 | 107 462.40 | 12.11.2025 | 11.11.2027 |
| 11 | Երևան, Կենտրոն Հանրապետության փողոց 47 (վկայական՝ N 30102025-01-0205) | 843.83 | 0.063 | 1 504 000 000 | 910 600 000 | 497 533 234 | 207 900 000 | 381 778.80 | 18.08.2025 | 17.08.2027 |
| 12 | Երևան, Նոր Նորք Հ. Գյուրջյան փողոց 58 շենք, 98 (վկայական N 19122022-01-0213) | 1182.5 | 0.3495 հա մակերեսով հողամասից և շենքի 2026.8 քառ. մետր մակերեսով ընդհանուր բաժնային սեփականության գույքի նկատմամբ 118250/906350 կազմող բաժնեմաս | 425 000 000 | - | 367 289 132 | - | 451 800 | 30.05.2025 | 29.05.2027 |
| 13 | Երևան, Շենգավիթ Գ. Նժդեհի փողոց 8 շենք (վկայական N 18022021-01-0258) | 279.72 | Շենքի պահպանման և սպասարկման համար հատկացված 0.213229 հեկտար մակերեսով հողամասի և շենքի ընդհանուր բաժնային | 53 400 000 | - | 46 439 862.16 | 7 377 280 | 146 265.60 | 13.11.2025 | 12.11.2027 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | սեփականության գույքի նկատմամբ 279.27/4755.46 բաժնեմասը | | | | | | | |
| 14 | Մարզ Կոտայք, համայնք Հրազդան Հրազդան ք. Հարավային թաղամասի Ա. Խաչատրյան փողոց 29/4 շինություն (վկայական N 29102025-07-0058) | 668.17 | 0.1812 | 92 400 000 | 34 200 000 | 52 580 805 | 5 232 150 | 336 757.2 | 22.12.2025 | 21.12.2027 |
| 15 | Երևան, Նոր Նորք Մոլդովական փողոց 45 (վկայական N 30092025-01-0111) | 1404.36 | 0.688419 | 1 385 800 000 | 1 123 800 000 | 356 986 594 | 171 337 900 | 629 654.4 | 18.12.2025 | 17.12.2027 |
| 16 | Մարզ Արագածոտն, համայնք Օհանավան 3-րդ փողոց 13 դպրոց (վկայական N 12042021-02-0030) | 4077.4 (շինության ավարտվածության աստիճանը՝ մինչև 50%) | 2.5184 | 305 902 000 | 192 506 500 | 279 687 035.20 | 111 862 291 | 1 399 680 | 25.09.2024 | 24.09.2026 |
| 17 | Երևան, Արաբկիր Կոմիտասի պողոտա 49/3 (վկայական N 17012022-01-0174) | 15 102.5 | 0.618758 | 5 536 800 000 | 3 562 600 000 | 4 742 077 207.48 | 560 767 381.48 | 2 372 400.96 | 26.11.2025 | 25.11.2027 |
| 18 | Երևան, Արաբկիր Մամիկոնյանց փողոց թիվ 60 (վկայական N 19092017-01-0199) | 3292.3 | 0.212944 | 1 448 200 000 | 877 300 000 | 702 431 774.35 | 125 441 690 | 1 008 481.20 | 19.08.2025 | 18.08.2027 |
| | Երևան, Արաբկիր Մամիկոնյանց փողոց 60/2 (վկայական N 19092017-01-0200) | 853.6 | 0.164453 | 828 600 000 | 714 000 000 | 321 502 394.60 | 96 876 467 | 606 400.20 | 19.08.2025 | 18.08.2027 |
| 19 | Մարզ Գեղարքունիք, համայնք Վաղաշեն Կամոյի խճուղի 34 (վկայական N 10092020-05-0057) | 510.4 | 0.12574 | 51 100 000 | 4 800 000 | 10 645 645.80 | 995 860.8 | 170 377.2 | 24.12.2025 | 23.12.2027 |
| 20 | Երևան, Նորք-Մարաշ Գ. Հովսեփյան 64/14 (վկայական N 12102022-01-0261) | - | 0.2 | 409 256 000 | 409 256 000 | 76 579 800 | 76 579 800 | 48 000 | 23.01.2025 | 22.01.2027 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | Մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր գյուղ Արտավազ 1-ին փողոց 39 հողամաս (վկայական N 24092025-07-0002) | - | 0.47266 | 50 000 000 | 50 000 000 | 8 875 136.82 | 8 875 136.82 | 97 078.80 | 01.10.2025 | 30.09.2027 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ